Հ. Յ. Դ.
ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ

# ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

1904

№ 3 (144) XIV ՏԱՐԻ ՄԱՐՏ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY



## ՆԵՐԿԱՅ 1904 ԹՒԻ ՓԵՏՐՈՒԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ

*** ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՑԱՒ

## ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

---

*Համաձայն ժողովի որոշման՝*

1) Յատուկ շրջաբերականներով, մինչև մայիսի վերջը, կը տեղեկագրուեն „Դաշնակցական" բոլոր կոմիտէներին այն բոլոր որոշումները՝ որոնք կապ ունեն նրանց գործունէութեան և պարտաւորութիւնների հետ:

2) Այն որոշումները, որոնք վերաբերում են կազմակերպական խնդիրների սահմանում եղած փոփոխութիւններին՝ կը հաղորդուեն կոմիտէներին մասնիկ տպագրում, տպագրուած ձևով:

3) Ծրագիրը և ատենագրութիւնները առանձին գրքոյկով կը հրատարակուեն միայն տարուայ վերջը, երբ պիտի գումարուի, համաձայն ընդհանուր ժողովի որոշման, Հ. Յ. Դաշնակցութեան խորհուրդը:

---

*„Դրօշակի" վերաբերմամբ ընդհանուր ժողովը կարգադրեց՝*

1) „Դրօշակը" ձրի տարածել միմիայն Թիւրքաց Հայաստանում և Թիւրքիայում:

2) Այդ սահմաններից դուրս՝ վերացնել մինչև այժմ գոյութիւն ունեցող անվճար ձևը և նշանակել բաժանորդագրութիւն հետևեալ կերպով՝ Ռուսաստան և Կովկաս՝ 2 ռուբլի. Պարսկաստան՝ 1 թուման. Ամերիկա՝ կէս դոլար. Եւրոպա և մնացած երկրներում՝ 3 ֆրանք տարեկան:

3) Այն տեղերում, ուր գոյութիւն ունեն „Դաշնակցութեան" կոմիտէներ, „Դրօշակը" տարածւում է վերջինների միջոցով, որոնք և պարտաւոր են գանձել տարեկան վճարը և ամբողջութեամբ, համաձայն տարածւող համարների քանակի, հասցնել Արևմտեան Բիւրոյին:

4) Կոմիտէ չեղած տեղերում մասնաւոր անձինք, „Դրօշակը" ստանալու համար, պէտք է դիմեն խմբագրութեան՝ կանխիկ ուղարկելով տարեկան վճարը:

**„ԴՐՕՇԱԿԻ" վերաբերեալ այս որոշումները գործադրութեան մէջ կը մտնեն ապրիլի համարից սկսած:**

# ՊԱՏՐԱՍՏ ԵՂԻՔ

Վտանգաւոր շշուկներ են լսւում։

„Հասարակութեան մէջ—գրում է Թղթակիցը կովկասեան մի մեծ քաղաքից—երկիւղած գաղտնապահութեամբ ահաւոր լուրեր են պատմում այն ծրագրի մասին, որի հեղինակը՝ բնական հետևողականութեամբ՝ համարւում է իշխան Գօլիցին և որի հիմնական նպատակն է՝ առաջ բերել մի կամ մի քանի կենտրոններում հայկական ջարդ, իբրև վերջաբան հակահայկական արդի քաղաքականութեան“։

Հայկական ջա՞րդ — „արմեանսկի պագրոմ“։

Նոր չէ այդ դժոխային դարձուածքը այն արիւնոտ վայրերում, ուր դեռ տիրապետում է սուլթանական անարգ իշխանութիւնը, բայց նա նորածիլ է ու հէնց այդ պատճառով անհաւատալի՛ այն վայրերի համար, ուր հաստատուած է քրիստոնեայ ցարիզմի տիրապետութիւնը, այնքա՜ն կործանիչ վերջին տարիները։

Անհաւատալի՛։ Որքա՜ն միամիտ, որքա՜ն մանկական է այդ հաճելի խօսքը այն հանուր ամբարտաւանութեան շրջանում, ուր ոտք է դրել միապետութեան քաղաքականութիւնը կովկասեան լեռների ստորոտում, քաղաքականութիւն, որ լքցրեց հայկական կեանքի խաղաղ տարեգրութիւնը հալածանքի և դաւադրութեան արիւնոտ դէպքերով ու կառավարութեան վտանգաւոր թշնամիների շարքը դասեց մի ազգ, որ այնքա՜ն անմիտ հեզութեամբ ընկճում էր իր մէջքը և այնքա՜ն անկեղծութեամբ արևշատութեան մաղթանքներ մրմնջում՝ գահերի հաստատմնացութեան օգտին. . .

Պլէվէ-գօլիցինեան տիպերի թագաւորութեան օրերին՝ չկայ ոչինչ անհաւատալի։ Շատերը կը հաւատայի՞ն տարիներ առաջ, որ Ասիական երկրներում քաղաքակրթութիւն տարածողի ծիրանին հագած կառավարութիւնը պօլիցիական մտրակներով պիտի քշէ դպրոցներից փոքրիկ մանուկներին, որոնց միակ յանցանքը ուսանելու տենչն էր։ Եւ կամ շատերը կարո՞ղ էին հեռաւոր կերպով իսկ հաստատել, որ 1876-ին յանուն քրիստոնեաների պաշտպանութեան իր զօրքը դէպի Էրզրումի բարձրավանդակը քշող կառավարութիւնը, քանի մի տարի յետոյ, նոյն քրիստոնեայ ժողովրդին ջարդելու ամենամեծ աջակիցը պիտի հանդիսանար։ Կամ ո՞ր „լուրջ“ մարդը կը համարձակէր պնդել, որ 80-ական թւականներին հայկական գաղթը քաջալերող իշխանութիւնը՝ ա՜յն աստիճան գարշելիութեամբ պիտի վարւէր դժբախտների այն „հօտի“ հետ, որ արեան երկրից գրոհ տւեց դէպի Արարատեան դաշտը՝ մի անկիւն գտնելու իր բազմատանջ գլխի համար. . . Իսկ հայկական եկեղեցիների բագերում շարան-շարան ընկած դիակնե՞րը։ Կարելի՞ էր երբևիցէ հաւատալ, որ այդօրինակ գազանութիւններ պիտի կատարւին, և ա՜յն „կայսերական“ հրամանով այնպիսի հաւատացեալների դէմ, որոնց միակ տենչն էր՝ ազատ աղօթել և իրենց աղօթարանի ազատ տէրը լինել. . .

Անողոք է փաստերի տրամաբանութիւնը։ Եւ այդ տրամաբանութիւնը, պարզ, ինչպէս ցերեկւան լոյսը, թելադրում՝ է խրոխտ շեշտով, որ բռնապետութեան դիմաց՝ անհաւատալի ոչինչ չկայ։ Նա չէ ամաչում, չէ մտածում. չէ ընկրկում ո՛չ խոհականութեան, ո՛չ փաստերի և ոչ հասարակական բողոքի առջև։ Նա կտրում է աջ և ձախ, վերև և ներքև, մեծ ու փոքր՝ միշտ և ամէն տեղ, ուր կարող է, երբ թոյլ է տալիս իր անսանձ, ամբարտաւան, անհամբերող ուժը. . .

Եւ եթէ մի օր, մի տխո՛ւր ու անմոռաց օր, այդ ամբարտաւան ուժը կը նկատի, որ հանգամանքները նպաստաւոր են մի „արիւնոտ“ դաս տալու ըմբոստացող հայութեան, նա չի վարանի վատնելու փող, զէնք և „ագէնտներ“՝ հայկական ջարդի համար, իբրև մի վճռական միջոց՝ թուլացնելու կասկածելի թշնամուն։

Եւ տարաբախտաբար, պատերազմական ներկայ շըրջանը, երբ արհեստական ու մութ միջոցներով ռուս ամբոխի „ազգասիրական“ բնազդները ուժգնօրէն գրգռուած են. երբ հասկանալի „անտարբերութիւնն“ անգամ նկատւում է իբրև մի դաւադրութիւն ուղղած կառավարութեան ապահովութեան դէմ. երբ կովկասաբնակ ազգերի փոխադարձ յարաբերութիւնները ստանում են կասկածելի կերպարանք, շնորհիւ այն „ուղերձների“ ու „ազնըւական պատգամաւորութիւնների“, որոնք՝ կազմւած ոստիկանութեան ձեռքով՝ երևան են գալիս Գօլիցինեան պալատի շուրջը ու պղտորում՝ հասարակաց զգացմունքն ու միտքը. երբ „զինւորական դրութիւնը“ դարձել է սովորական ոչ միայն անհանգիստ կենտրոնների, այլև լռակեաց անկիւնների համար. երբ, վերջապէս, ամէն մի մարդ, որ ցարիզմի ստրկամիտ ներբողարկու չէ, նկատւում է իբրև խռովարար և յեղափոխիչ, — մի այդպիսի շրջանում, ասում ենք, շատ հեշտ է, և գուցէ շատ „յարմար“՝ կրակի վրայ իւղ ածել և կազմակերպել Կիշինեօվեան առաւօտ այն վայրերում, ուր երկար ժամանակ տիրում էր հաւատ և վստահութիւն՝ դէպի „բարեխնամ“ կառավարութիւնը. . .

„Արմեանսկի պագրո՛մ“։

Դրա համար նախօրօք թմբուկներ չեն զարնի և ոչ էլ ցուցանակներ կը կախեն հրապարակներում։ Ընդհակառակը։ Արիւնոտ ընդհարման նախատօնակին՝ թերևս լսեն համակրութեան պաշտօնական խօսքեր, գուցէ և նկատւեն ժպիտի նշաններ այն դաժան դէմքերին, որոնց վրայ „հայ“ անունը ակօսում է ներվոտ ցնցումներ և կատաղութիւն։ Եւ հէնց „ժպիտի“ և „հանգստութեան“ այդ քնաբեր օրերին կը թափւի անմեղ արիւնը, այնքա՜ն հաճելի բռնապետների հոտոտելիքի համար։

Կովկասեան հայե՛ր։

Մնացէք հաւատարիմ համերաշխութեան մեծ

գաղափարին. սիրով նայեցէք բոլոր այն ազգերին, որոնք ձեզ հետ միասին ապրում են քաղաքականապէս դժբախտ նոյն հողի վրայ. մի՛ դաւաճանէք հ ա ր և ա ն ո ւ թ ե ա ն խնկելի սկզբունքին և զզուանքով նայեցէք այն բոլոր անարգ փորձերին, որոնցով կառավարչապետներն ու նահանգապետները կը փորձեն վ ի հ բանալ ձեր և հարևանների մէջ. թող ոչ մի սարկամիտ մաղթանք, կատարուած թալանուած եկեղեցիների առջև, և ոչ մի շողոքորթական ուղերձ, ուղղած բռնաւորի գահոյքին՝ չ'արատաւորեն տանջուած հայութեան փշակիր գլուխը։ Ամուր՝ փորձանքի մէջ, անյողդողդ՝ վտանգի դիմաց։ Հաւատարիմ եղէք այդ բոլորին։ Բայց դրա հետ միասին եղէք զգաստ, զգոյշ, եղէք պատրաստ։ Թիֆլիսի պալատի մէջ դժոխային ծրագիրներ են մշակւում։ Ու այդ գաղտնի ծրագիրների շնորհիւ՝ անհաւատալի չպիտի թւայ սարքովի մի յարձակում հայերի վրայ, հրապարակական մի ընդհարում, դիցուք՝ թիւրքերի կամ կովկասաբնակ այլ ազգերի ու հայերի մէջ, որ կը լինի աւելի քան եղերական մինչև „ոստիկանութեան հասնելը“։ Մի՛ մոռացէք այդ ու պատրաստ եղէք՝ ինքնապաշտպանութեան։

Կովկասեան պատմութեան մէջ՝ ամօթի և նախատինքի օր պիտի համարուի այն դժբախտ, սև օրը, երբ ոևէ կենտրոնում հայ ժողովրդի գլխին կը շողայ ոստիկանութեան ջանքերով բարձրացած սուրը, և նա՝ փոխանակ զէնքով յետ մղելու այդ անարգ հարուածը, պիտի մեկնի իր պարանոցը և գլորուի արեան մէջ, մրմնջալով՝ „Մենք չէինք սպասում, մենք զէնք չունէինք“։

Այդ մրմունջը կարեկցութիւն չի յարուցանի, այլ խորին դժգոհութիւն, գուցէ և նողկանք։ Դա թուլամորթութեան արատից զերծ չի պահի անզգայ, անպատրաստ և մորթւող զոհերին։

Մորթւելու օրեր չեն, այլ ինքնապաշտպանութեան։

Կովկասեան հայեր,—քաջաբար նայեցէք դարանամուտ վտանգին, պատրաստ եղէք, պաշտպանեցէք ձեզ։

## ԵՐԿՈՒ ԳԱՂՏՆԻ ՀԵՌԱԳԻՐ

*Առաջ ենք բերում հարազատ թարգմանութիւնը երկու գ ա ղ տ ն ի հ ե ռ ա գ ի ր ն ե ր ի, որ սուլթանական պալատը ուղարկել է իր կուսակալներին 1903 թւի հոկտեմբերին։*

### I

„Հայ խռովարարները՝ օտարներէ վայելած օգնութեամբ և հանգամանքութեամբ՝ զէնքեր, ռումբ (դինամիտ) և ասոնց նման ռմբային դեղօրայք հաւաքելով կայսերական երկիրների մէջ փոխադրելը և աստ-անդ պահելով, այս կերպիւ գարնան եղանակի սկիզբէն խռովայոյզ ընթացքների դիտումը, և, առնուած տեղեկութեանց նայելով, կրկին, ըստ նախնոյն, Սասունի կողմերէն գործի սկսելնին հասկցուած ըլլալով—ասոնց մասին պետական կառավարութեան կողմէն ընելիք բան պիտի ըլլայ միայն—կատարեալ ուշադրութեամբ, ամենախիստ և ստոյգ միջոցներով ուշադիր ըլլալ, թողնելով անկարելիութեան մէջ շարունակաբար հայ խռովարարների պատրաստած միասաբեր շփոթների գործադրութիւնը, չարագործ եղող գլուխներն ալ ձերբակալելով, գարնան սկզբի մօտենալուն խռովութիւններ ու շարժումներ անկարելիութեան մէջ պիտի թողնել։ Ինչպէս այս մասին առաջ և վերջ ծանուցուած է, կայսերական բարձր հրամանատարութեան ևս տեղեկացուած ըլլալով, կուսակալութեան մէջն ալ ջանքեր և միջոցներ ի գործ դնելնիդ, ձեռք բերուած նորագոյն արդիւնքը և հետևանքը նորին բարձրութեան ոտքի հողերուն ներկայացնելնիդ, ժողովրդեան բնաւ երբէք գործի միջամտել չտալնիդ խալիֆայական վեհ. կայսր բարձր հրամանաւ կ'ազդարարուի“։

*7 հոկտ. 319 թ.* *Կայսերական քարտուղար*

### II

„Բուլգար աւազակներու ձեռք գտնուած ռումբեր (բօմբ) հայոց կողմէ պատրաստուելու և շինուելու մասին տեղեկութիւն առնուած է։ Ուստի սահմանէն այս կողմ անցնել սորված հայու ուժանակ և ռումբ շինելով գործածելնին որոշ ըլլալով՝ արտաքոյ կարգի միջոցներով ու ուշադրութեամբ հայոց պտոյտ չ'ընելուն շատ աւելի զգուշութիւն ընելնիդ, և առաջուց մտնողներուն ռումբի և ուժանակի գործածութեամբ իսլամական գիւղ և բնակավայրերու քայքայման տեղի չտալու միջոց, և ասոնց անմիջապէս ձերբակալելու և այս մասին գեղեցիկ ծառայութիւն ընողներն ալ կայսերական բարձր վարձատրութեան հասնելիքնին, պէտք եղածներ տեղեկացնելնիդ կայսերական բարձր հրամանաւ կը ծանուցուի“։

*3 հոկտ. 319 թ.* *Կայսերական քարտուղար*

## ՀԱՅ-ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՄԻՏԻՆԳԸ

Մարտի 12-ին Անգլիայի մայրաքաղաքում տեղի ունեցաւ ժողովրդական մեծ ցոյց յօգուտ Մակեդոնիայի և Հայաստանի։ Նախաձեռնութիւնը պատկանում էր Լոնդոնում հիմնուած „Բալկանեան Կոմիտէին“։

Միտինգին մասնակից էին շատ անգլիացի հայասէրներ, ի միջի այլոց՝ Ջ է մ ս Բ ր ա յ ս։ Պարիզից եկել էին „Պրօ Արմէնիայի“ խմբագիր Կ ի ա ռ և Վիկտոր Բ է ր ա ր։

Բուլղարիայից ներկայ էին իբրև պատգամաւորներ՝ տիկին Կարավէլով և պրոֆեսոր Ժորժեվ։

Ֆրանսիս դը Պ ր է ս ա ն ս է, որ անձամբ պիտի ներկայանար միտինգին Կիառի ու Բէրարի հետ, հարկադրուած եղաւ մնալ Պարիզում և ղրկեց ժողովի նախագահին մի երկար հեռագիր, ուր շեշտում էր հայ և մակեդոնական խնդիրների միատեղ լուծման անհրաժեշտութեան վրայ։

Խօսեցին՝ Կ ի ա ռ՝ Մուշի վերջին դէպքերի և հայ յեղափոխական գործունէութեան մասին, Բէրար՝ Մակեդոնիայի մասին, ապա Ջէմս Բրայս և ուրիշներ։

Ահաւասիկ այդ նշանաւոր միտինգում ընդունուած որոշումները.

1. Ներկայ խորհրդաժողովը, կազմուած Մեծ-Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի պատգամաւորներից՝ յայտարարում է, որ տաճկական յոռի վարչութեան շարունակումը Մակեդոնիայում եւ Հայաստանում՝ անպատւութիւն է քաղաքակրթուած Եւրոպայի համար եւ պահանջում է դա-

տապալումը այն սարսափների և պաշտօնէութիւնների, որոնք կատարւում են թիւրքերի ձեռքով՝ այդ երկրներում:

2. Նկատի առնելով Ռուսաստանի և Աւստրօ-Ունգարիայի անյաջողութիւնը՝ իրագործելու սոյն բարւոքումն Մակեդոնիայի բնակիչների պայմանների մէջ և կամ հեռացնելու մի նոր ապստամբութեան վտանգը, այս խորհրդաժողովը յայտնում է, որ մակեդոնական խնդրի միակ գոհացուցիչ լուծումն է՝ նշանակել մի կառավարիչ, անկախ սուլթանից և պատասխանատու միմիայն եւրոպական պետութիւնների առաջ:

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՄՈՒՇ-ՍԱՍՈՒՆ

### I

### ՑՈՒՆԱՆԻ ԴԷՊՔԸ.

10 փետրւար, 1904

Ցերեկւայ ժամը $6^1/_2$-ն էր, երբ 12-14 ձիաւոր ոստիկաններ պաշարեցին Ցունանի մէջ այն տունը, ուր կը մնային վեց զինուած հայեր: Ոստիկանները մէկ կողմէ լուր կը հասցնէին Նորշէն հայ գիւղը, որ կէս ժամ միայն հեռի է Ցունանէն, ուր կը գտնւի 200-է աւելի զօրք, միւս կողմէ՝ խոտի խուրձեր դիզելով յիշեալ տան դրան առջև, կ'ուզեն կրակի տալ տունը: Ձիաւոր մըն ալ կ'ըշտապէ դէպի Մուշ (Մուշը Ցունանէն երկու ժամ հեռաւորութիւն հազիւ ունենայ):

Գիւղացիք, թէև նախապէս կը ջանան ռևէ միջոցաւ մը ոստիկանները հեռացնել, բայց անկարելի կ'ըլլայ: Այդ պարագային զինուած երիտասարդներէն մին դուրս կը վազէ՝ իրադրութիւնը հասկնալու համար. երբ կը նկատէ ոստիկաններուն խոտի դէզ քանդելը, առաջին կրակը կուտայ. պայթիւնի ձայնին արձագանք կուտան իր ընկերները, որոնք „յարձակում" պոռալով կը վազեն ոստիկաններու վրայ: Ոստիկանները սարսափահար կը փախչին, պաշարողները անոնց ետևէն... Կը հասնի Նորշէնի զօրքը, ապա և շրջակայքը գտնւող ոստիկաններն ու խուժանը. բայց կտրիճները կէս ժամ հեռաւորութենէն չեն թողուր յառաջ գալ: Անոնց ամէն մէկ պայթիւնին՝ ոչխարներու պէս ցիրուցան կ'ըլլան զօրքերը: Յիշատակելու արժանի է, որ Ցունանի հայուհիները առանց շուարելու կարկուտի պէս թափուող գնդակներէն՝ խումբ-խումբ կը վազեն քաջերուն օգնելու. մէկը ոստիկաններու ձիերը կը քաշէ, միւսը՝ ամանով նաֆտ կը բերէ և իր շապիկը կտրտելով, այս ու այն կռւողին կը մօտեցնէ ըսելով. „մատաղ ձեր ոտաց, մաքրեցէք, իւղեցէք հրացաննիդ"...

Ամենէն օրինակելին է մէկը, որի անունը չեմ ուզեր տալ. ասիկայ ալ յարձակելով տան մը մէջ ապաստանող ոստիկաններուն վրայ՝ „թէսլի՛մ, թէսլի՛մ" — անձնատո՛ւր, անձնատո՛ւր կը պոռայ. հոդ կը հասնի հայ կտրիճներէն մէկը և խոտի խուրձեր բերել կը հրամայէ. կանայք խոտն ու նաֆթը կը հասցնեն. պաշարւող ոստիկաններու դուռը կրակի կուտան: Դժբախտաբար, միւս կողմէ զօրաց և խուժանի բազմութիւնը կը յառաջանայ... Այդ միջոցին գիւղացիներէն մէկը վառւող կրակը կը մարէ և ոստիկանները կ'ազատին խեղդւող վիճակէն:

Կռիւը՝ թէև չափազանց անհաւասար՝ բայց կը շարունակւի մինչև մութ կոխելուն: Հայ կտրիճները ոստիկաններու ձիերը հեծած կ'անհետանան: Գիւղացոց կը հրամայւին ցրւիլ: Թիւրքերի գաղանութիւններէն ազատ մնալու համար՝ գիւղացիք կը ցրւին և հոս ալ իրենց դէմ կ'ելնէ բնութիւնը իր արհաւիրքներով. երեք երեխաներ ձիւնի վրայ սառած կը մնան:

Այնուհետև, լաւ նկատի առէք թիւրք բարբարոսութիւնը ա ն զ է ն ժ ո ղ ո վ ր դ ի հանդէպ: Գիշերւայ 3-4 ժամին հազիւ կը համարձակին գիւղին մէջ թափւիլ, երբ կը համոզւին որ, այլևս զինակիր հայ չկայ իրենց դէմ. կըսկսին գիւղը թալանել, ասեղ մ'անգամ չթողնելու պայմանաւ: Կը գտնեն կանանց բազմութիւն մը՝ մանր աղջիկներով տան մը մէջ, որոնք չեն կրցած փախստական լինել դէս ու դէն: Հոդ կը կատարւի այն գաղանութիւնը, որի նմանը տեսնւած չէ գուցէ նոյնիսկ թիւրքիոյ մէջ, — մինչև անգամ անչափահաս աղջիկները կը լլկեն և կիսամեռ վիճակի մէջ կը թողնեն: Ծննդաբեր հարս մը կ'առևանգեն բարբարոսութեամբ, մահամերձ վիճակի մէջ: Կը գտնեն Յոհնէ անուն ծերուկ մը, կըսպաննեն և ջըհորի մէջ կը ձգեն: Սպանւածներու ճիշդ թիւը յայտնի չէ:

Անմիջապէս թիւրք խուժանը ձիաւոր խմբեր կը կազմէ՝ ուրիշ գիւղերու վրայ ալ յարձակում գործելու: Քաղաքի խանութները կը փակւին և երթևեկութիւնը կը դադարի:

Ցունանի կռւին ու կոտորածը՝ տեղական ազգաբնակութեան հետ ցնցեց ամբողջ Սասունն ալ: Սասնցոց մի մասը դէպի դաշտ կը վազէ՝ միանգամէն լուծելու այն դժոխային հանգոյցը, որու թելերով ժողովուրդը խեղդամահ ըլլալու վիճակի մէջ է: Մեր ընկերներէն Սեպուհը մաս մը զինւորներով կը հասնի Դաշտի արևելեան մասի վրայ գտնւող Հաւատորիկ հայ գիւղը: Յաջորդ օր Անդրանիկը մի ուրիշ խմբով Սեպուհի ետևէն գնալու միջոցին կը գիշերէ Սասնոյ Շատախ կոչւած մասի Տաբըք հայ գիւղը, ուր կը բնակին 15-20 տուն քրդեր՝ Պօղըքցի ըսւած աշիրէթէն: Ասոնք ցարդ կ'ապրէին մեզ հետ հաշտ ու սիրով: Միակ գիւղն է, ուր կը գտնւէին քիւրդ աղգաբնակութիւն և Սասունի գայմագամանիստ տեղն էր մինչև աշուն: Հոս երկու քրդեր կը փորձեն սպաննել Անդրանիկին և չեն յաջողիր: Անդրանիկը իր խմբով Քոփ հայ գիւղը հասնելէ և քանի մ'օր անցնելէ վերջ կ'իմանայ քրդերի իր դէմ լարած դաւադրութեան մասին: Անմիջապէս Սեպուհը Հաւատորիկէն կը կանչէ զինւորներով միասին և կը վերադառնայ Տաբըք, ուր կը բանտարկեն քրդերը, կը գրաւեն զէնքերը և ընտանիքները կը ցրւեն հայ գիւղերու մէջ: Հաւար կը ձգեն Սասնոյ մօտակայ հայ գիւղերը, ժողովուրդը կը թափւի և գիւղը աւերակ կը դարձնէ: Գիշերը հազիւ վրայ կը հասնի, լրաբերներն ալ իրարու ետևէ կը հասնին, ըսելով թէ „Աշիրէթներ հաւաքւած Խոյթի մէջ Սասնոյ վրայ յարձակում գործելու կը պատրաստւին, որոնց պիտի միանայ Բաղէշի զօրքն ալ"...

Բ. Դրան հետ անընդհատ բանակցութիւններ կը կատարւին: Վաղը ի՞նչ պիտի ըլլայ — չգիտենք... Բայց կառավարութիւնը ինքը լաւ գիտէ վաղւան գալիքը նա կը շարունակէ հարկահաւաքութեան անօրինակ գազանութիւններով բնաջնջել հայ տարրը:

### II

12 փետրւար, 1904

Օրէցօր դրութիւնը կը վատթարանայ. կոտորածի ձեռնարկներ կը ծրագրւին և փորձեր կը կատարւին: Ալայի բէյը Բաղէշէն ճանբէգար կոչւած հեծեալներով հասաւ.

Մուշ և տեղաւորեցաւ Հայոց Թաղերը։ Տեզտարենց Մէհմէտ էֆ. անուն հարիւրապետը 15-20 ոստիկաններով քիւրդ ցեղապետներու հետ խորհրդակցութեան պաշտօնով կը շրջի դաշտի մէջ․․․ Վերջապէս մեր այսօրուայ իրականութիւնն է հետևեալը.—Մշոյ և դաշտի յարաբերութիւնները խզուած են. շուկան հինգ օրէ իվեր ամա՛ի է, առևտուրը ամբողջապէս դադրած, գեղէ գեղ երթևեկութիւնը արգելուած է։ Մեծ պահքի առաջին օր՝ Սասնոյ Տապըք գիւղի քրդերը՝ միացած Մշոյ Թիւրք տարրի հետ՝ յարձակեցան շուկայի մէջ հայերու վրայ։ Նպատակը լոկ կոտորածի սկզբնապատճառ դառնալն է. քանի գլուխ ու Թև ջարդեցին։ Խուճապը կըսկսի. հայ ազգաբնակութիւնը այդ օրէն փակուած կը մնայ Թաղերու մէջ․․․

### III

15 փետրուար, 1904

Մեր վիճակը անտանելի է և դէպքերը օրհասական։ Տեղւոյս Թիւրքերը շատ յուզուած են հայոց դէմ և չէյխերու առաջնորդութեամբ հեռագիր և հանրագրեր կը տեղան Բ. Դրան և սուլթանի գլխին, որպէս զի Սասնոյ, Մշոյ և շրջակայից հայերը ջ ա ր դ ե լ ո ւ հ ր ա մ ա ն մը ձեռք բերեն։ Եւ կըսպառնան որ, եթէ հրաման իսկ չտրուի, իրենք քրդերի և զօրքերի հետ միացած՝ պիտի յարձակին Սասնոյ վրայ։

Թւէս 15 օր առաջ, հարկահան ոստիկանները Ցունան հայ գիւղին մէջ շարք մը անկարգութիւններ կ'ընեն։ Գիւղացիք կը վռնդեն զիրենք գիւղէն։ Ասոնք քաղաք գալով կառավարութեան լուր կուտան։ Երեկոյեան, Թըրքական ժամը 10-ին, քաղաքէն պատրաստի զօրքը՝ ոստիկաններով և Թիւրք ժողովրդով սկսաւ գնալ դէպի այդ գիւղը։ Մինչև անոնց հոն հասնելը (քաղաքէն մէկ ու կէս ժամ հեռի), գիւղացիք դուրս կուգան և կըսկսին կռուիլ։ Հարկահան ոստիկանները իրենց ձիերը Թողլով՝ կը փախչին։ Այն ատեն գիւղացիներէն քանի մը հոգի ամուր դիրք բռնելով կը շարունակեն կռիւն։ Տեղէս գնացող ոստիկաններէն և զօրքերէն կուի ատեն 300-ի չափ կը փախչին, Հեղինէ գիւղը կերԹան և հոն կը պահւին մինչև լոյս։ Երիտասարդներն գիշերանց անոնց Թողուցած տասն ձիաները առնելով կը հեռանան։ Զօրաց կողմէ 2 հոգի կը մեռնին։ Առաւօտեան՝ Թիւրք և քիւրդ՝ ամէն տեղերէ վազէվազ այդ գիւղը կը դիմեն և ամբողջ գիւղը (120 տուն) կը Թալնեն, առանց աւել մ'իսկ Թողնելու։ Կանանց և աղջկանց կը բռնաբարեն, ծծկեր երեխաներէն շատերը ձիւնի մէջ ողջ-ողջ կը Թաղեն, շատերը ջրհորներու մէջ կը լեցնեն և քանի քանի մարդիկ տանջանքներով կըսպաննեն։ Գիւղէն մաս մը արդէն գիշերով փախած է. միւս օրը՝ կուռողներու հետ տասի չափ երիտասարդներ ևս զէնքը վերցրած լեռը ելան։ Այդ դէպքը պատահած օրէն մինչև օրս քաղաքն ալ ահ ու դողի մէջ է. շուկայ իսպառ չկայ, օրական հազիւ 5-6 խանութ կը բացւի, առևտուրը բոլորովին կայնած է և դրամական տագնապը մեծ։ Երևակայեցէք, Կարինէն վաճառականաց հաշւէ ղըկած փոխանակագրերն անվճար բոլորն յետ դարձուցին, պատասխանելով՝ „առևտուր չունինք, կը ցանկաք մեր հաշւով ապրանքները յետ վերադարձնել“։ Կառավարութիւնը քանի քանի անգամ առաջնորդին պաշտօնապէս գրեց որ խանութները բանան, բայց նա պատասխանեց Թէ, ժողովուրդը վստահութիւն չունի։

Տեղւոյս հայերը գրեԹէ բոլորն ալ, բացի կամակոր քանի մը երևելիներէ, երդմամբ ձեռք-ձեռքի են տուած. Սասնոյ և Դաշտի բոլոր գիւղերը օրհասական րոպէին կըսպասեն. կ'ուզեն զէնք առնել, բայց ցաւալին այն է, որ զէնք չի ճարւիր, քանզի կառավարութիւնը խստիւ արգելած է հայերուն զէնք ծախել և չէյխերն իսկ՝ ծախողը Մարգարէի հաւատացեալ չեն ճանչնար։ Գարնան հազարաւոր անձինք պատրաստ են զէնք գնելու, սակայն ամբողջութիւնը աղքատ լինելով՝ նիւԹական հնարաւորութենէ զուրկ է։ Ա՜խ, երանի մեր ժողովուրդը լաւ զինուած ըլլար, նա կրնար իր նպատակին ծառայել․․․

Այժմ վեց Թապուր զօրք կայ տեղս և ձայն կայ որ տասն Թապուր ևս պիտի գայ, Դ-րդ բանակի հրամանատար Զէքի փաշայի հետ միասին, մարտ ամսուն։

Թիւրքերը անցեալ աշնանէ սկսեալ՝ ջարդի նպատակաւ իրենց առևտուրը հայ գիւղացիներու հետ բոլորովին կտրած են. ցորենը, որ այժմ 60-70 ղուրուշի կը ծախւի, գարնան աւելի պիտի Թանկնայ. 20 ղուրուշի սալաֆ կ'ուզեն, բայց 10 փարայ տւող չկայ։

Ցունան գիւղի արկածի առԹիւ, տեղւոյս առաջնորդն քաղաքական ժողովոյ հետ միասին հեռագիր մը տւին սուլԹանին, ժողովրդեան անտանելի վիճակը բացատրելով. մինչև ցարդ պատասխան մը չէ ստացւած և յուսացող ալ չկայ։

Զէնքը, որ այժմ ժողովրդեան միակ պաշտելի առարկան է, սարսափելի Թանկ է. մի ռուսական սուրմալի 15-16 լիրայի բարձրացեր է և ան ալ չի ճարւիր, բոլոր ժողովուրդ „ա՜խ զէնք, վա՜խ զէնք“ կը գոռայ․․․

Վերջին րոպէին քիւրդ Հաճի Ֆէրօն, Թըրքաց խորհրդով, 200 զինեալ մարդերով քաղաքս մտաւ որ ջարդ սկսեն, բայց կառավարութիւնը առաջն առաւ, զօրք հանեց հայոց բոլոր Թաղեր և փողոցները, իսկ քիւրդերին ցրւեց Թիւրքաց տներ 3-4 հոգւով։ Կը յաջողի՞մ արդեօք կատարւելիք մանրամասնութիւններն հաղորդել շարունակ,—զայդ տէրը միայն գիտէ։

### IV

## ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

—

14 փետրուար, 1904

Մուշի առաջնորդ Գնէլ վարդապետ Գալէմքերեան Ցունան գիւղի դէպքին առԹիւ հեռագրած է պատրիարքարան. „Քիւրդերու կողմէ Ցունան գիւղը ղարնւած, ժողովուրդը խեղճ և անպաշտպան. կայսեր գԹուԹիւնը հայցեցէք“։

Կառավարութիւնը վար դրած է այս հեռագիրը և իր կողմէն հեռագրած է անմիջապէս Մուշի զինւորական կառավարչին, Թէ այդպէս դէպք մը իրօ՞ք տեղի ունեցած է։ Կը պատասխանեն, Թէ ոչինչ չէ եղած․․․

Ասոր վրայ Օրմանեան պատրիարքը պալատ կը կանչւի ու իր առջև կը դնեն Գնէլ վարդապետի, ինչպէս նաև Մուշի զինւորական կառավարչի հեռագիրը և բացատրութիւն կը պահանջեն։ Պատրիարքը ժամը 5-էն 8 պալատ կը մնայ։ ՍուլԹանը կ'ըսէ Թէ Գնէլ վարդապետ այս տեսակ սուտ հեռագիրներով կ'ուզէ խռովութիւն յարուցանել։ Պատրիարքը, եԹէ կ'ուզէք հաւատացէք, իր չ'ունեցած բոլոր քաջութիւնը ժողվելով, սիրտ կ'ընէ պատասխանելու, Թէ ինք կատարեալ վստահութիւն ունի Գնէլ վարդապետի ողջմտութեան վրայ, Թէ անիկայ չի

կրնար սուտ հեռագիրներ շինել ալն, և կը պահանջէ քննութիւն մը բանալ և ստուգել, թէ Մուշի զինուորական կառավարիչը չէ՞ արդեօք ճշմարտութիւնը ծածկողը։

Ինչ որ զարմանալի է սակայն, սուլթանը ինքն ալ մեծ հաւատք չունի իր պաշտօնեաներու ուղղամտութեան վրայ — եթէ երբէք Ցունանի ջարդը ու կողոպուտը ուղղակի իր հրամանով չէ տեղի ունեցած — և կը պատուիրէ Օրմանեանին շրջաբերականներ ղրկել ամէն գիւղական եկեղեցի՝ յորդորելով ժողովուրդը հաւատարմութեան, չ՚անսալու յեղափոխականներու խռովարար քաջալերութիւններուն, հաւատարիմ մնալու սուլթանին գթութեան և բարերարութեան վրայ։ Սուլթանը իր կողմէն կը խոստանայ խիստ հրամաններ տալ գաւառային իշխանութեանց՝ արդարութեամբ հսկելու ժողովրդեան խաղաղութեան և հանգստութեան վրայ, պատահած այլևայլ դէպքերը տեղւոյն վրայ սահմանափակելու և շուտով վերջ տալու ամէն անկարգութեանց։ Սուլթանը կը խոստանայ նաև նոր զինուոր չղրկել այդ կողմերը։

Աւելորդ է ըսել, թէ սուլթանական այս խոստումներէն Օրմանեան մը միայն կրնայ գիտակցօրէն խաբուիլ. Հետևաբար մեր տխրահռչակ պատրիարքը իրար կ՚անցնի, մեծ գործ մը տեսնելու պէս, 300-ի չափ շրջաբերականներ կը պատրաստեն սուլթանի տուած իմաստով և անցեալ շաբթու մինչև 252 շրջաբերականներ կը ղրկուին ամէն կողմ. . .

Մեր կողմէն չենք ուզեր աւելորդ յորդորներ տալ ժողովրդեան, ականջ չկախելու սուլթանական խոստումներուն և պատրիարքական խրատներուն։ Ինչպէս կ՚երևայ՝ արդէն Մուշի վիճակներէն հասած տեղեկագիրներէն, Ցունանի դէպքէն առաջ և թէ ետքը ժողովուրդը հասկցած է այլևս իրական արժէքը այդ յորդորներուն, որոնց նպատակն է միայն կոյր զկուրան զիրենք դէպի կործանում և մահ առաջնորդել։ Մօսինի դիմադրութիւնը սուլթանին դուր չէ եկեր, ան վարժուած էր հայ ժողովուրդին ոչխարների պէս հլու և հնազանդ դէպի սպանդարան դիմելը տեսնելու։ Իսկ ինչ կը վերաբերի սուլթանին խռովութիւն եղած տեղերը նոր զօրք չղրկելու խոստումին՝ Մուշի այլևայլ վիճակներէն հասած վերոյիշեալ տեղեկութիւնները կը ցուցնեն, թէ բոլորովին ունայն խոստում մըն է այդ։

Պատրիարքական շրջանակներէն իմացուած է հոս, որ ծանօթ հեռագրին հետևանքով Գնէլ վարդապետը և քանի մը աղաներ հսկողութեան տակ առնուած են։ Եթէ ճիշդ է այս լուրը, սուլթանի կողմէ եղած խոստումներուն ինչ կերպ գործադրուելուն վրայ նոյնիսկ Օրմանեանի պինդ գլխին մէջ ատիկայ կրնայ գաղափար մը գոյացնել։

## ՆԱՄԱԿՆԵՐ ՎԱՆԷՆ

I

10 յունուար, 1904

Խուզարկութիւն.— Քանի օր առաջ մի քանի տասնեակ հեծելազօրք հանեցին գաւառները, որոնք խուզարկեցին Աղթամար, Նարեկ, Խորգոմ ու Ալիւր գիւղերը։ Լսել էին, որ յեղափոխականների մի զինուած խումբ անցել է այդտեղից։ Կուսակալը դիմել է առաջնորդարան, պահանջելով իրեն յանձնել յեղափոխականներին։

25 յունուար

Բախիաի հաւաքումը.—Իրազէկ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Վանի վրայ 20 հազար լիրայի պահանջ կայ, մակեդոնական շարժումն է կլանում այդ դրամները։ Եւ կուսակալը անխնայ ու գազանաբար իր հրամանագրերով, թողել է քաղաքի թաղերում գազանների մի վոհմակ, որոնք մտնում են տներ, եղած-չեղածը դուրս են թափում՝ առնում են տուրքի փոխարէն. ենթարկելով չքաւորներին սոսկալի ծեծի ու ջարդի։ Իսկ գաւառների մասին արդէն լսել պէտք է, այն անլուր տանջանքներին քարն անգամ չպիտի կարողանար դիմանալ։ Իսկ առաջնորդը և մեր լիրբ աղաներ, որոնք ուրիշ պարագաներին իրենց ազդեցութիւնը գիտեն բանեցնել և քիթերը խոթել իրենց չվերաբերող խնդիրներում, այսօր լռելեայն հանգստանում են, կրկին շողոքորթում, մինչև գետին խոնարհւում ամենայետին փոլիսի առջև անգամ։

30 յունուար

Վտանգի նշաններ. — Սասունը պաշարման դրութեան մէջ է։ Վանից և Էրզրումից գունդ-գունդ այնտեղ են դիմում։ Ընդհանուր հրամանատարը եկել էր Մուշ. հրամայուած է Երզնկայի զօրաբանակին շարժուել դէպի Սասուն։ Եւ այդքան էլ բաւական չհամարելով՝ Բաղդատի 4-րդ զօրաբանակից էլ մի գունդ պիտի գայ եղեր։ Կառավարութեան հրամանով ջան-բէգլարների վոհմակներ ընկած Մշոյ դաշտում՝ կողոպտում ու ոչնչացնում են թէ պաշարը և թէ կենսունակ ուժերը։ Նրանք Մշոյ դաշտը ոչնչացնելով և աւարի մատնելով՝ կարծում են ոչնչացնել Սասունի ուժը, բայց յեղափոխականները գիտեն իրենց արածը. . . Զօրքեր է լեցուած և Ղատախ. ասում են, որ Թնդանօթ էլ է ուղարկւում. ի՞նչ են մտածում և ի՞նչի համար—չէ հասկացւում։ Կառավարութեան գործողութիւնների մէջ ինչ որ շտապողականութիւն է նկատւում. Տուրքերի գանձումը պիտի լինի մինչև ապրիլ ամիս։ Հեռագիրների երկար շարքեր են փոխանակւում տեղական կառավարութեան կենտրոնականի հետ։

Փետրուարի 4-ին լսեցինք, որ անցեալներում՝ աղմկող զինուորներից իրենց հրացաններով ու պարագաներով փախել են 30 զինուոր։ Կառավարութիւնը նոյն գնդի մնացող զինուորներին հրամայել է հետամուտ լինել դրանց և կալանաւորել, բայց դրանք պատասխանել են, որ եթէ հնար ունենային իրենք էլ կը հետևէին նրանց։ Տաճիկ ժողովուրդը և զօրքը գրգռուած է։

II

8 փետրուար, 1904

Սարսափ.—Նորանոր կոտորածի սարսափը տարածուած է ամէն ուրեք։ Ամէն կողմէ կը շշնջան. „Գարնան կոտորած կայ“։ Թէ ուստի՞ ծագած է այս շշուկը, — շատ որոշ չէ. միայն այսքան յայտնի է, թէ ամբողջ հայ ազգաբնակութիւնը կը խօսի քաղաքի և գիւղերու մէջ։

Կառավարութեան պատրաստութիւնները.—Ամէն կողմերէ զօրքեր կը քաշուին դէպի Մուշ-Սասուն, որ այժմէանից արդէն կէս պաշարման դրութեան մէջ է։ Երևոյթները ցոյց կու տան թէ, գարնան սկիզբները Սասուն արիւնի թատր պիտի ներկայանայ։ Թուրքերը կը խօսին, թէ կառավարութիւնը կըսպասէ ձիւներու հալելուն՝ Սասունի վրայ քալելու համար։

Ինչե՞ր կըսպասէ խեղճ հայ ժողովրդին առաջիկայ գարնան. . .

Վարդգէսի վճիռը.— Տեղւոյս ռճրադատ ատեանը Վարդգէսին դատապարտած էր 101 տարւայ բերդարգելութեան։ Միրզէրս Կ. Պոլսոյ վճռաբեկ ատեանը վճիռը ետ ղրկեց, միանգամայն հրամայելով, որ կախաղանի փոխէ նախկին վճիռը։ Հրամանը կատարեցաւ և վճիռը ուղարկւած է Կ. Պոլիս վաւերացւելու։

# ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ՔՍԱՆՎՆԵՑՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Պետերբուրգ, 3 մարտի, 1904

Հաշտութեան օրե՛ր, անցաք գնացիք։

Միթէ՞ այլ չէք դառնալու։ Եւ կամ ե՞րբ։ Դժւար է գուշակել, քանի որ այնքա՛ն թանձր ու դառնագոյն է այն քաղաքական մաղձը, որ լքցրել է արթնացող ժողովուրդների երբեմն հեզ, համբերատար, անվրդով հոգին։

Եւ ցասման այդ մաղձը, որ յաճախ փոխարկւում է անհուն ատելութեան, դէպի այն բոլորը, ինչ նոյնիսկ կրօնական կամ ցեղական կապ ունի բռնապետութեան ներկայացուցիչների հետ, ահա մի տարի է, որ իր զարգացման համար անսպառ նիւթ է գտնում՝ այն հանուր ըմբոստացման մէջ, որ այսօր կովկասեան կեանքի էական գիծն է կազմում…

Ըմբոստացման շրջան է այս։

Եւ որքա՛ն զգալի։ Քսան տարի առաջ, երբ Արարատեան նահանգի կենտրոնում՝ տեղի ունեցան քաղաքական առաջին բանտարկութիւնները, երբ դրանից երկու տարի յետոյ Թիֆլիսը վկայ եղաւ՝ առաջին անգամ՝ մի հայ խմբագրութեան — „Մշակի“ — խուզարկութեան, երբ վերջապէս տասներկու տարի առաջ, 1892-ին Մետեխեան հռչակաւոր բանտը, մինչև այն՝ վերապահւած գլխաւորապէս գողերի և գրամանենգների համար, իր պատերի մէջ մի տարւայ ընթացքում ընդունեց աւելի քան տասն հայ երիտասարդներ՝ կալանաւորւած „քաղաքական յանցանքով“,— ոչ միայն Թիֆլիսն ու Երևանը, այլ ամբողջ Անդրկովկասը սարսռեց, դարձաւ գերի գերմնական ահի, ենթակայ անբացատրելի մի երկիւղի։ Մարդիկ տնից դուրս չէին գալիս։ Փողոցում դողում էին ոստիկանից։ Չէին համարձակւում յիշել անունները այն մարդոց, որոնք կալանաւորւած կամ բանտարկութեան էին ենթարկւած…

Եւ ամենազօր ոստիկանութիւնը հրճւում էր։

Իսկ այժմ։ Այժմ այլևս այն չէ։ Տարիներ շատ չեն բոլորել, բայց „մարդկային հոգին“ շատ է փոխւել։ Կենտրոնական բանտերի հետ միասին, այս վերջին տարին գաւառական „դուսաղներն“ անգամ պատիւ ունեցան իրենց բորբոսնած պատերի մէջ կլանելու „փափախաւոր“ քաղաքական յանցաւորներ, ռուսական բռնապետութեան բազմատեսակ դաւաճիրներ։ Ո՞վ ասէք, որ այժմ վտանգաւոր չէ ու բանտ չի գնում։ Եւ շինականը և քաղաքացին։ Եւ գրող և անգրագէտ։ Եւ ինտէլիգէնտ և երկրագործ։ Կին և քահանայ, վանական, վարդապետ, արհեստաւոր—բաժանւած կեանքի մէջ դիրքով, զբաղմունքով, նոյնիսկ շահերով — միանում, կողք կողքի կանգնում՝ այն վայրերում, ուր բռնապետութիւնը իր փրկութիւնն է որոնում, բայց որտեղից այնքա՛ն ուժգնօրէն դիմադրութեան գոչն է հնչում…

— Գիտէ՞ք, այս գիշեր եղբօրս բանտ տարին, ասում է ժպիտով և յաճախ մանկական հպարտութեամբ երբեմնի վախկոտ հայուհին։

— Մեր քաղաքից արդէն 24 հոգի են աքսորել, աւելացնում է գաւառացին, պարծենկոտութեամբ, և դարձեալ ժպիտը երեսին։

Ժպիտի, արհամարհանքի շրջանն է այս։ Երկիւղի շրջանն անցաւ գնաց։ Եւ ամէն օր կեանքը տալիս է նոր խրախոյսներ, համարձակութեան նոր փաստեր։ Զանգեզուրեան գիւղերից մէկում, երբ երէցփոխը դարձաւ գաւառապետի մօտից, ստորագրած, ինչպէս ծեծի և սպառնալիքի ազդեցութեան տակ, կալւածական յափշտակութեան թուղթը, երիտասարդ շինականներից երկուսը հրացանով դիմաւորեցին „նամարդ“ երէցփոխին։ — „Դու արժանի չես գդակ ծածկելու“—գոռում էին գիւղացի կանայք, անէծք ու նախատինք թափելով անուանարկ ներկայացուցչի գլխին…

— Թող տանեն, ուր ուզում են, բանտ չէ, Սիբիր էլ կերթանք, ցամաք հացով սաղ կեանքներս կ'անցկացնենք, բայց մեր ուխտը չենք դրժի, մեր խօսքին պինդ կը մնանք,— ահա այսպիսի խօսքերով էին բաժանւում իրենց շինականներից Սիւնեաց նահանգի գիւղական մի քանի կալանաւորները…

Իսկ գիւղացինե՞րը։ Լացի և հեկեկանքի փոխարէն նրանց շրթունքներից հնչում են խրախոյսի խօսքեր, սիրտ տւող, վերակենդանացնող կեցցէնե՛ր նրանց հասցէին, որոնք շրջապատւած զինւորներով, գնում են պաշտպանելու մի մեծ գաղափար, որը նրանք աւելի զգում, քան ըմբռնում են։ „Երբ 24 կալանաւորները—ասում է Ախալքալաքի աքսորին ներկայ ականատես-նամակագիրը — դուրս եկան ճամբայ ելնելու՝ ժողովրդի մէջ որոտաց միաբերան կեցցէ՛. կարծէք աքսոր չէր այդ, այլ մի հանդէս, ուրախութեան մի տեսարան… Ոստիկանները մնացել էին ապշած“։

—

„Տանջանքի ոգևորութեան“ հետ, աւա՜ղ, զուգընթացաբար ուռչում և աճում է ատելութեան խորին ըզգացմունքը, ուղղած ոչ միայն բռնապետութեան, որ ընդհանուր անարդարութեան մարմնացած ներկայացուցիչն է այսօր գերի-երկրի մէջ, այլ նոյնիսկ դէպի այն ամեղ ժողովուրդը, որ կրօնական կամ ցեղական կապ ունի նրա հետ, բայց որը յօշոտւում է գիշատիչ արծւի ճանկերում…

Սիրոյ, համերաշխութեան, փոխադարձ յարգանքի ձայները, որոնք անցեալում, տարիներ շարունակ, այնքա՛ն հաճելի ներդաշնակութեամբ հնչում էին երկրի մէջ, ուղղած բոլոր ազգերին, այժմ, ցաւ է ասել, նուաղած, համարեայ մարած՝ այլևս լսելի չեն, և գերեզմանական այդ լռութեան մէջ՝ ազգայնական փոխադարձ ատելութեան թոյնը անարգել կերպով թափանցում է հասարակական կազմի բոլոր մասերը…

Եւ որքա՛ն ուրախ է կառեցնող ցարիզմը…

Համերաշխութեան գեղանի օրերին այդ ատելութեան նշոյլն անգամ չկար հայ ժողովրդի սրտի և հոգու մէջ։ Ընդհակառակը։ Գիւղական հանդէսներում՝ թէ դպրոցի մէջ, շինական խրախճանքներում թէ քաղաքային հանդէսների մէջ՝ ռուսասիրութեան արտայայտութիւններն էին հայկական ներքին քաղաքականութեան բնորոշ գիծը, նրա բովանդակութեան էական մասը։ Այժմ այդպէս

401

*Ի Հոգևոր կառավարութիւն Հայոց .... քաղաքի*

*Մատուցանէ սոյն յայտարարութիւն*

*Օր. գիւղի ծխատէր Յակոբ Քահանան.*

*„Ըստ ձեր և ձեզ հրամայեալ շրջաբերականի № 2294 հրամանի, պարտ անձինս համարիմ տալ տեղեկութիւն, թէ ոպիսի եղանակաւ ռուսաց կառավարութեան ներկայացուցիչը մեր եկեղեցւոյ գրաւման գործը կատարեց։ Գ. գաւառապետ Լևիցկին իր օգնական պ. Միխիլով՝ իւրեանց հետ ունենալով կոմիսիայի անդամ Չեպուրին և քառասունհինգ երկրապահ զինւորներ, առանց նախօրօք իմաց տալու, գիւղս մտան և գիւղիս տանուտէրի առաջնորդութեամբ մեր Ս. Թադէոս եկեղեցւոյ դուռը կտրեցին և խիստ հրամայողաբար եկեղեցւոյ դրան բանալին պահանջեցին, որով և երէցփոխի ներկայութիւն անհրաժեշտ եղաւ։ Ուստի մարդ ուղարկեցինք՝ հանդէն երէցփոխ Ս. Անդրէասեանց բերել տւինք։ Նա եկաւ ու յայտնեց թէ՝ „Ես լինելով հոգևոր ատենայեանին ծառայ, առնիմ ինձ հրամայող. երբ նրանից (իմա՛ ձեզանից) հրաման առնամ, այն ժամանակ միայն կարող եմ ձեզ (իմա՛ մարմնաւոր իշխանութեան) ամէն ինչ ներկայացնել, ապա թէ ոչ անկարող եմ"։ Բայց գաւառապետ Լևիցկին դիմեց մարակի հարւածներին և հրամայեց ոստաւորապէս հետևեալ խօսքերով մեզ հասկացնել՝ ծեծելու պատճառը.*

*„Շուն հայեր, մինչև հիմա ձեր եկեղեցու անունով առած փողերը (իմա՛ նուէրներ) Էջմիածին նստող խողաձև պետերդ կուտեն, կը գիրանան, իսկ դուք միշտ աղքատ, միշտ անտեղեակ կը մնաք։ Իսկ այժմ ռուսաց բարեխնամ կառավարութիւն ձեզ բարիք կ'ուզէ և դրա համար էլ ձեր եկեղեցւոյ խնամուքի գործ կ'ուզէ ինքն առանձնել։ Բայց ո ր մ է ա շ կ ա է ք, ոչինչ չէք հասկնար, դուք կը կարծէք, որ ռուսաց կառավարութիւն ձեր կրօնք և պաշտամունք-ծէսը ձեր ձեռքէն առնել և իր ուղղափառ հաւատին կը դարձնէ ձեզ. այդ սուտ է"։*

*„Մեր գլացիներէն Աստուրեան առաջ գալով ասաց. „Տէր իմ, մինչև այսօր ինչ որ լսել ենք կատարուած է... մեզնից ամէն տեսակ հարկ ու տուրքեր, տեղի անտեղի, կարող անկարող, պահանջած են և կատարած ենք մարմնաւոր իշխանութեան հրամաններ։ Իսկ այժմու հրամանդ հոգևորին կը պատկանի, նրանից երբ թոյլտուութիւն կըստանանք, կարելի է կատարենք"։*

*„Սրան էլ վերոգրեալ հայհոյանքներով ծեծեց։ Զինւորներուն հրամայեց անխնայ ծեծել հաւաքուած բազմութեան մեծին ու փոքրին և ցրւել։ Գիւղացիք, որոնց մէջ և բազմաթիւ մանր երեխաներ և կնանիք, պատերէն վար ընկնելով փախան և ցրւեցան, իսկ վերոգրեալ Աստուրեանին՝ խօսելու համար և երէցփոխին „բանալին քաղաք տարած եմ" ասելու համար, գաւառապետը զինւորների առաջ ձիերու հետ մինչև քաղաք վազեցնել հրամայեց։ Լևիցկին սկսեց տանուտէրին և երէցփոխանին խիստ ծեծել և բանալին պահանջել։ Երէցփոխ Անդրէասեանի կինը չկրնալով դիմանալ երկան ծեծին՝ տանից բանալին բերեց։ Բացին և արձանագրեցին մեր եկեղեցւոյ շէնքը և գոյքեր, որք են՝ ընդամէն 26 կոպէկ փող, ուրիշ ոչինչ, քանի որ մենք գաղթական ենք և 20 տարիէն հազիւ չորս պատ կանգնած ենք, վրայի ծածքով։*

*„Այդ ահագին գումար ցուցակագրելէ յետոյ, գաւառապետը կալուածք հարցրեց։ Ասինք, որ ոչինչ չկայ, և իրաւ որ հողի նեղութեան պատճառաւ ոչ մի արտ և ոչ մի չայիր չենք տւած և ուրիշ գոյք ու կայք չունի մեր եկեղեցին։*

*„Գաւառապետի օգնական Միխիլով հրամայեց, որ ձիաւոր զինւորները վերոյիշեալ երկու անձանց քաղաք տանելու հրամանը շտապով կատարեն։*

*„Երեք չորս օր յետոյ, սեպտեմբերի 8-ին, գիւղից քաղաքի դատարան կանչւեցան՝ ինձ հետ՝ չորս անձինք, որ գնանք մեր յօժարութեամբ ստորագրութիւն տանք նախարարութեան այդ անհաճոյ կարգադրութեանը։ Իսկ մենք ներկայանալով լսեցինք նոյն հրաման և յայտնեցինք, որ համաձայն չենք։ Նոյն պաշտօնեայն դատարանի մէջ նոյն անարգական խօսքերով տանուտէրից գ ն ա կ ը (նշան) խլեց և մեզ սպառնաց հեռու երկիրներ աքսորել, քանի որ անհնազանդ գտնուած ենք կառավարութեան դէմ. ապա մեզ դուրս արին դատարանից։*

*„Այս է մեր եկեղեցւոյ գրաւման գործ"։*

*Ստորագրութիւն Քահանայի և Երէցփոխի*

*Հոկտ. 1 1903, Օր...*

Եւ քանի՜ քանի այդ տեսակ յայտարարութիւններ, գրւած անճար քահանաների կամ հալածական երէցփոխների կողմից (երէցփոխնե՛րն էլ այժմ քաղաքական ագիտատորներ են...) ուղղւեցին կենտրոնական հոգևոր մարմիններին։ Նրանցով լի են արխիւները...

Ւիշտ, արտասուք, արիւն է կաթում այդ „գռեհիկ" պատմւածքներից. „անգրագէտ" յայտարարութիւնների այդ տխուր էջերից։ Հաւատացող՝ բայց խաբւած, հ պ ա տ ա կ ո ւ թ ե ա ն ներշնչումների ենթակայ՝ բայց դաւանորէն հիասթափւած ժողովրդի ա՛խն է այդ, նրա ցասման և յեղաշրջման աղբիւրը, այն ահարկու քուրան, ուր ամբոխային ատելութեան մաղձն է պատրաստւում, պայթուցիկ հեղուկը ժողովրդական ըմբոստացման։

Որքա՜ն մ ա ղ ձ ո տ պիտի լինի վաղւան օրը...

—

19 մարտի, 1904

Քանի մի օր առաջ ռուսաց մամուլի մէջ, երևի անզգուշութեամբ, սպրտեց մի լուր, որը անպայման արժանի է ձեր ուշադրութեան։ „Եկեղեցական Համբաւաբերը", որը պէտք է համարել ուղղափառ սինոդի օրգան, յայտարարեց, որ „Ս. Սինոդը ուղղափառ եկեղեցու մերձաւոր նպատակն է համարում" դէպի ինքը գրաւել հայ լուսաւորչական եկեղեցին, որ վաղուց անջատւած է"...

Վարագոյրը փոքր առ փոքր բացւում է...

Շատ տարի է, որ ուղղափառ կառավարութիւնը „հայոց եկեղեցին իր գիրկը գրաւելու" տենչանքի յետևից է ընկած։ Այդ մտքով յաճախ՝ ուղղակի կամ անուղղակի դիմումներ են եղել հայոց կաթողիկոսներին, հայոց կրօնական վարչութեան զանազան ներկայացուցիչներին,—բայց միշտ անաջող։ Վերջին տարիները փոխւած է գործելու եղանակը։ Համոզելու կամ գրաւելու փոխարէն՝ ձգտում են ստիպել, ճնշել։ Հայոց եկեղեցական վարչութեան իրաւունքների սահմանափակումը, և եկեղեցական կալւածների խլելը՝ այդ նպատակին տանող վճռական միջոցներից մէկն է համարւում կառավարչական „խելօք" շրջաններում։ Եւ ահա, իբրև լրումն այդ ալլանդակ քաղաքականութեան, Պետերբուրգի Սինօդը յայտնում է, որ „ուղղափառ եկեղեցու մերձաւոր նպատակը" պիտի լինի հայոց եկեղեցու միացումը, ուրեմն մի նոր ս ո ւ ր բ դժգոհութիւնների, մի նոր դառն նոր-րանոր „պատմութիւնների" կովկասեան սահմաններում։

Է. ԱԿՆՈՒՆԻ

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ԲԱՍԵՆԻ ԵՒ ԴԱԼԻԲԱԲԱՅԻ ԿՌՒՈՒՄ ԸՆԿԱԾ ՖԷԴԱՅԻՆԵՐԸ

„ԿԱՅԾԱԿ" ԶԻԱՒՈՐ ԽՄԲԻՑ

—

1. Բ ա ր ս ե ղ Թ ի ր ա ք ե ա ն (Խան).—Ծնւել է Կեսարիայի Տերեվենք գիւղում 1863 թւին։ Հանրածանօթ է Խ ա ն անունը։ Բեղմնաւոր մի կեանք յեղափոխութեան մէջ։ Դեռ երիտասարդ հասակում վրէժխնդրութեամբ վառւած՝ նա մասնակցել է Պոլսում Գում Գափուի և Բաբ Ալիի ցոյցերին. ապա անցել է Պարս-



**ԲԱՍԵՆԻ ԵՒ ԴԱԼԻԲԱԲԱՅԻ ԿՌՒԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖԵԴԱՅԻՆԵՐԸ**

„ԿԱՅԾԱԿ“ ՁԻԱՒՈՐ ԽՄԲԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բ) Խ. Մարտիրոսեան *(խմբի բժիշկը, շումլայեցի)*, Գ) Կոկոլ Շամիլ *(ախալքալաքցի)*, Դ) Բ. Թիրեաքեան, *(Խան Կեսարիայի Տէրեվենք գիւղից)* Ե) Հ. Չմշկեան *(ալեքսանդրապոլցի)*:



ԲԱՍԵՆԻ ԵՒ ԴԱԼԻԲԱԲԱՅԻ ԿՌՒԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖԵԴԱՅԻՆԵՐԸ

ՀՆՏՍԻԱԿ ԽՄԲԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

([illegible], սեպտեմբեր [illegible])

կաստան և Խանասորի կռւին է մասնակցել։ Եղել է և Վանում. Վանից անցնելով Կովկաս, ընտրւեց Խաստուրի հերոսների խմբապետ։ Այդ մեծ կռիւը հմտութեամբ վարելուց և անվնաս վերադառնալուց յետոյ՝ նշանակւեց „Կայծակ“ ձիաւոր խմբի առաջնորդ և Բասենի կռիւների ժամանակ Բոցիկի և Գոմաձորի վճռական կռիւներում հրաշալի կերպով կառավարեց խումբը, քաջութեամբ կռւեց։ Երրորդ օրը երբ վճռում են վերադառնալ Կովկաս, 4 օրւայ յոգնութիւնից կազդուրւելու և նոր ուժերով վերստին անցնելու համար, սահմանի մօտ, լուսաբացին, նկատւում են թշնամիներից և կռւի բռնւում։ Դալիբաբայի քարում դիրք բռնելով, դիմադրում են մինչև փամփուշտների սպառւելը, ապա ընկնում անհաւասար ուժի առաջ, քառապատիկ զոհեր գլորելով թշնամիներից։ (Բ. Թիրաքեանի մասին կը հրատարակւի աւելի ընդարձակ կենսագրական)։

2. Համայակ Զմչկեան (Սև Համօ).—Ծնւել է Ալէքսանդրօպօլում 1868 թւին։ Կրթութիւնը ստացել էր Կարսի քաղաքային դպրոցում։ Վառվռուն, մաքուր, ընկերական տղայ էր Սևը։ Բնութիւնից օժտւած էր անհանգիստ բնաւորութեամբ։ Թէև առևտրական կեանքում է եղել, բայց միշտ ձիու վրայ թափառական, արկածալից կեանք է ունեցել։ Շատ անգամ է ուզեցել ֆէդայական խմբերի մէջ մտնել, ազատութեան զինւոր գրւել, բայց ընտանեկան հանգամանքները արգելք են եղել։ Վերջապէս „Կայծակ“ խմբի պետի օգնական ընտրւելով, թողնում է առևտուրը և անցնում խմբի հետ երկիր։ Հրաշալի ձիավարժ և հրացանաձիգ էր։ Հրացանը իր անբաժան ընկերն էր։ Գոմաձորի կռւի մէջ նրա ցոյց տւած քաջութեան մասին մեծ գովեստով են խօսում։ Ընկաւ քաջը Դալիբաբայի քարում։

3. Խաչիկ Մարտիրոսեան.—Ծնւել է Բուլղարիայի Շումլա քաղաքում 1875 թւին։ Կրթութիւնը ստացել էր բուլղարական զինւորական վիրաբուժական դպրոցում և եղել էր զինւորական ծառայութեան մէջ բուլղարական բանակում։ Մինչև 1903 թ. Դաշնակցութեան դրամական օժանդակող խմբերի մէջ էր և ապա Կովկաս անցնելով, մտաւ „Կայծակ“ ձիաւոր խմբի մէջ։ Որպէս խմբի վիրաբոյժ և զինւորական խորհրդի անդամ, կռւեց Բասենում, իբրև քաջ զինւոր, և սպանւեց նոյնպէս Դալիբաբայի քարում։ Ամուսնացած էր և ունէր մի որդի։

4. Բուլանըգցի Աւտալ.— 25 տարեկան, ամուսնացած։ Խանի հետ միասին մասնակցել է Խաստուրի ֆէդայական կռւին։ Ընտրւելով „Կայծակ“ խմբի զինւորական խորհրդի անդամ, մասնակցեց Բոցիկի և Գոմաձորի կռիւներին։ Վերադարձի ժամանակ վիրաւորւած Ռաշօ ընկերոջը ձիու վրայ դնելու պատճառով, խմբից յետ է մնում մի ուրիշ զինւորի հետ և նկատւելով թշնամուց, երեք հոգով դիրք բռնած՝ կռւում են մինչև փամփուշտների վերջանալը։ Ապա ջարդելով հրացանները, թշնամու ձեռքը չտալու համար, վճռում են ռէվօլվերներ արձակելով դիրքից դուրս գալ երեք ուղղութեամբ, առանձին առանձին փախչելով, թշնամուն շփոթեցնելով, որպէս զի իրենցից գոնէ մէկնումէկը ազատւի։ Երեքից միայն Աւետիս անունով զինւորն է ազատւում և անցնում սահմանը, Ռաշօն իսկոյն ընկնում է գնդակներից, իսկ Աւտալը ռէվօլվերով էլի մի քանի րոպէ կռւում է, ապա երբ փամփուշտները հատնում են, բարձրանում է մի քարի վրայ և քրդերէն լեզւով պատւիրում է թշնամիներին, որ երթան պատմեն, թէ ինչպէս ինքը մինչև վերջին փամփուշտը կռւել է, վեց հոգի սպանել, հրացանը ջարդել և քարի վրայ կանգնած, կուրծքը բաց, թշնամուն արհամարհելով ընկել է...

5. Ռաշօ Մկրտչեան.—Խլաթի Ջիղլրա գիւղից, 26 տարեկան երիտասարդ, „Կայծակ“ խմբի III տասնեակի տասնապետը։ Գոմաձորի կռւում ոտից վիրաւորւում է թեթև կերպով. վերադարձին արնաքամ լինելով՝ վայր է ընկնում ձիուց և ապա Աւտալի ու Աւետիսի հետ կռւի բռնւելով՝ ընկնում է քաջարի զինւորը, չմոռանալով մահւան վայրկեանին իսկ ջարդել հրացանը, որպէսզի թշնամուն զրկէ նրանից օգտւելու հնարաւորութիւնից։

6. Պետրոս Տէր Յարութիւնեան։ —41 տարեկան, Խլաթի Բաբշէն գիւղից. ամուսնացած

7. Պետրոս Դլոյեան.—25 տարեկան, ծնւել է Նոր-Բայազէդի Ալիչալու գիւղում. զինւոր է եղել ռուսական բանակում և փախչելով զինւորութիւնից, մտել էր „Կայծակ“ խմբի մէջ, որպէս զինւոր։

8. Յարութիւն Սաֆարեան.—26 տարեկան, ամուսնացած. եղել է դրամական օժանդակ խմբերի մէջ Կովկասում. մտել էր ձիաւոր խմբի մէջ, որպէս զինւոր։

9. Խեչիկ Տէր Յովհաննիսեանց.—28 տարեկան, ամուսնացած. ծնւել է Նուխւայ Եազոռլի գիւղում. մասնակցել է Խանասորի արշաւանքին։ „Կայծակ“ խմբի I տասնեակի առաջնորդն էր. Գոմաձորի կռւում քաջութեամբ կռւելուց յետոյ՝ վերադարձին ընկնում է ռուսական սահմանի մօտ, նախապէս գլորելով 3 հոգի թշնամիներից։

10. Ռուբէն Մալուլեանց.—20 տարեկան, աշխոյժ մի երիտասարդ, ծնւել է Ալէքսանդրօպօլում։ Իր համեստ աշխատանքից նա միշտ մեծ բաժին է հանել յեղափոխութեանը, մտնելով Դաշնակցութեան օժանդակ դրամական խմբերի մէջ։ „Կայծակ“ խմբի հետ նա ևս անցնում է Բասեն և իր մատաղ կեանքը զոհաբերում Գործին։

11. Մարտիրոս Յարօյեան (Յարօ).—Ծնւել է Ալէքսանդրօպօլում և զինւոր ընկած ռուսական բանակում։ Փախչելով զինւորութիւնից, մտնում է Դաշնակցութեան զինւորական խմբերի մէջ։ Նա յայտնի է Ալէքսանդրօպօլի և Կարսի շրջանում, որպէս ամենայանդուգն տէռօրիստ։ Կարսի մէջ կատարւած վերջին տէռօրը, Թիւրք Շէրիֆ բէգի սպանութիւնը, որ ցնցեց ամբողջ գաւառը, լռիկ-մնջիկ Յարօյի գործն էր։ Ահագին բազմութեան մէջ, երկու պահապան ոստիկաններով շրջապատւած՝ Շէրիֆ բէգը գլորւում էր Յարօյի գնդակից՝ օր-ցերեկով։ Խիզախ տէռօրիստը 10-20 րոպէից յետոյ՝ շորերը փոխած՝ դիակի գլխին կանգնած է լինում... Անցնելով Բասեն, ֆէդայիների հետ, և Բոցիկի ու Գոմաձորի կռիւներից անվնաս ազատւելուց յետոյ, թշնամիների անակնկալ գնդակներից ընկնում է կորիճ Մարտիրոսը։

12. Տիգրան Երանոսեան.—30 տարեկան, ամուսնացած։ Երկար ժամանակ սուրհանդակութիւն է արել Սերոբ-Աղբիւրին. ծնւել է Մշոյ Աւզուտ գիւղում։

13. Մամիկոն Գրիգորեան.—21 տարեկան ծնւել է Նուխւայ Ջիւջամիշ գիւղում։

14. Լևոն Սարգսեանց.—22 տարեկան, ծընւել է Ղազախի Ղուլալի գիւղում։

15. Նիկոլ Բաղրեանց. — Ղարաբաղցի, 30 տարեկան. Ոսկանապատում եղել է դրամական խմբերի մէջ: „Կայծակ' խմբի || տասնեակի պետն էր. սպանւեց Գոմաձորի կռւում:

16. Թումաս Աւետիսեան.—23 տարեկան, ծնւել է Կարինում. մասնակցել է Կարսի շրջանի դրամական խմբերում: Ինքը առևտրական էր:

17. Ցաքէթ Տէր Սարգսեանց.—Բուլանուխի Կոփ գիւղից, 28 տարեկան. եղել է Թիֆլիսի զինւորական խմբերում:

18. Բագրատ Բօրակչեանց.—Կարինի Իլեջա գիւղից, 25 տարեկան. մասնակցել է Բաթումի դրամական խմբերում:

19. Լևոն Ղարիբեան.—20 տարեկան, ծնւել է Շուլավէրում. դրամական խմբերի անդամ է եղել:

20. Բիթլիզցի Տիգրան.—22 տարեկան:

21. Կարապետ Յովսէփեան.—Բուլանուխի Շէյխ-Եաղուբ գիւղից, 26 տարեկան. մասնակցել է Խանասորի և Խաստուրի կռիւներին: „Կայծակ“ խմբի \ տասնեակի պետն էր:

22. Ալէքսան Գարակեօզեան.—Սեբաստիայի Կամես գիւղից, 28 տարեկան. մասնակցել է Բաբ-Ալիի ցոյցին:

23. Ալէքսանդր Սողոյեան. — Խնուսցի, 23 տարեկան. մասնակցել է Խաստուրի կռւին:

24. Ալէքսան Ազարեան.—Գանձակի Փեփ գիւղից, 21 տարեկան. եղել է Դաշնակցութեան դրամական խմբերում:

25. Գրիգոր Մանուկեան.—Մշոյ Կոփ գիւղից, 29 տարեկան, ամուսնացած. եղել է Թիֆլիսում Դաշնակցութեան դրամական խմբի անդամ:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ԲՈՒԼԳԱՐԻԱ

Երկար ժամանակից իվեր շարունակւող բանակցութիւնները Բուլգարիայի և Տաճկաստանի միջև՝ մակեդօնական խնդրի առիթով՝ յանգեցին հետևեալ համաձայնութեան.—

Բուլգար կառավարութիւնը պարտաւորւում է. 1° Արգելք լինել իր երկրի սահմաններում յեղափոխական կոմիտէների և ապստամբական զինւած խմբերի կազմակերպւելուն, ինչպէս և առհասարակ որևէ դաւադրութեան՝ ուղղւած Թիւրք իշխանութիւնների դէմ: 2° Պատժել ամենախիստ կերպով այն անձանց, որոնք կից նահանգներում հանրային խաղաղութեան դէմ վտանգաւոր քայլեր անելուց յետոյ՝ կըգան ապաստանելու Բուլգարիայի կամ Արևելեան Ռումելիայի մէջ: 3° Արգելել բոլոր միջոցներով՝ հարևան վիլայէթները պայթուցիկ նիւթեր մտցնելու և այլն:

Թիւրքիան իր կողմից պարտաւորւում է. 1° գործադրել այն ռէֆօրմները, որ ընդհանուր համաձայնութեամբ ընդունւած են Թիւրքիոյ, Աւստրիայի և Ռուսաստանի կողմից — Սալօնիկի, Մօնաստիրի և Կօսօվայի վիլայէթների նկատմամբ: 2° Ներում շնորհել բոլոր քաղաքական յանցաւորներին, բացի նրանցից, որոնք ուժանակային փորձեր են արել երկաթուղիների, կամուրջների, հանրային հաստատութիւնների դէմ և այլն:

Մի յատուկ համաձայնութիւն պիտի կայանայ երկու պետութիւնների միջև՝ յանցաւորներին և դասալիքներին փոխադարձաբար յանձնելու մասին: Մի ուրիշ համաձայնութիւն պիտի մշակւի՝ սահմանների վրայ հսկելու միջոցների մասին:

Մօտիկ ապագան ցոյց կըտայ, թէ որքան անկեղծ է բուլգար կառավարութիւնը իր որոշումների մէջ և թէ ինչպէս կ'անդրադառնան այդ որոշումները Բուլգարիայի հանրային կարծիքի և մասնաւորապէս Սարաֆովի կուսակցութեան վրայ, որի դէմ իսկապէս ուղղւած է թիւրք-բուլգարական ներկայ համաձայնութիւնը:

Մօտիկ ապագան ցոյց կըտայ նաև խնդրի ամենահետաքրքրական կողմը, այն՝ թէ որքան իրաւացի են պետակօմներն ու դաշնակիցները՝ սպասել, որ Թիւրքիան խաղաղ ճանապարհով, առանց արտաքին մի ազդու միջամտութեան, կիրագործէ ռէֆօրմների այն խեղճ ծրագիրը, որ անվերջ կերպով քաշքշւում է, առանց շօշափելի մի հետևանքի:

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Սօցիալիստական կուսակցութիւնները բոլոր երկրներում մանիֆէստներով ու հրապարակական ժողովներով բողոքեցին ռուս-ճապօնական պատերազմի դէմ:

Ամենաուժգին բողոքը հնչեցրին իհարկէ, Ռուսաստանի յեղափոխական ուժերը: Նրանց մէջ նկատւում է տենդային իրարանցում: Բոլոր կուսակցութիւնները իրենց թռուցիկների մէջ շեշտում են պատերազմի անժողովրդական և հակաքաղաքակրթական լինելը, բոլորն էլ գուշակում են բռնապետութեան մօտալուտ անկումը Ռուսաստանի մէջ: Բոլորն էլ համաձայնւում են, որ պատերազմը պիտի մեծապէս նպաստէ տնտեսական և քաղաքական յեղաշրջմանը... „Րէվօլիւցիօննայա Րօսսիա“՝ Ռուսաստանի մարտական-սօցիալիստ կուսակցութեան օրգանը, յորդոր է կարդում ընկերներին՝ կրկնապատկել իրենց եռանդը, ուժ տալ պրօպագանդին և ագիտացիային՝ քաղաքներում ու գիւղերում: Նա այն կարծիքի է, որ ներկայ պատերազմը պիտի վերջանայ Ռուսաստանի պարտութեամբ և պիտի առաջ բերէ միաժամանակ „ռուս բռնապետութեան ողբերգական վերջաւորութիւնը“: Մօտաւորապէս նոյնն է ասում և սօցիալ-դէմօկրատների օրգան՝ „Իսկրա“:

Ցուզիչ լուրեր են գալիս Ռուսաստանի բոլոր ծայրերից: Ամէն տեղ՝ ցոյցեր պատերազմի և միապետութեան դէմ: Լեհաստանը, երկար ժամանակ լուռ ու մունջ, սկսում է խլրտալ: Ճապօնական յաղթութիւնները Լեհաստանի երեք հատւածների մէջ յարուցանում են մեծ ոգևորութիւն: Աւստրիական պարլամենտի անդամ յայտնի լեհ սօցիալիստ Դաշինսկի նորերս Կրակօվում՝ հրապարակական բազմամարդ ժողովի առաջ նշաւակեց ցարի բռնապետութիւնը: Ռուսական Լեհաստանում սօցիալիստ կուսակցութիւնների հետ հրապարակ է գալիս ազգային-դէմօկրատ հզօր կուսակցութիւնը ևս: Լէհ ու լիտվին, մալօրօս, հայ, վրացի ևն կազմակերպութիւնները ցոյց են տալիս խօսքի ու գործի մէջ մի ուշագրաւ համերաշխութիւն:

Այն ինչ համալսարանական երիտասարդութիւնը աղմ.

կայսրը ժողովներ է գումարում և իր զգւանքը յայտնում միապետական կառավարութեանը։ Դորպատում, Խարկովում և ուրիշ կենտրոններում բողոքող ուսանողները հարիւրներով դուրս են վռնդւում։ Մի քանի համալսարաններ փակւած են արդէն։

Արևմտեան Եւրոպայի սօցիալիստ կուսակցութիւնները ուշի ուշով հետևում են ծայրագոյն արևելքի հրդեհին։ Բոլորն էլ լռելեայն կամ բացարձակօրէն իրենց համակրանքն են յայտնում սահմանադրական փոքրիկ Եապօնիային, որը կարող է վաղը հանդիսանալ ազատարար մի գործօն՝ ահագին քարացած բռնապետութեան հանդէպ...

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

***

Քաղւածաբար առաջ ենք բերում Անատօլ Լը Ռուա Բօլիօի մի առաջնորդող-յօդւածը Européen-ի մէջ, որ հետևեալ վերնագիրն է կրում. „Ֆրանս-անգլիական համաձայնութիւնը և պատերազմը Ռուսաստանի ու Եապօնիայի միջև“։

„Քիչ կան անցքեր, որոնցով մենք աւելի ուրախանայինք, քան այն մերձեցումով, որ առաջ եկաւ Ֆրանսիայի եւ Անգլիայի միջեւ... Մարդիկ, որոնք պատրաստեցին այդ մերձեցումը, իրաւունք ունին հպարտանալու... Նրանք բաց արին մի նոր դարագլուխ եւրոպական, կամ լաւ է ասել՝ համաշխարհային քաղաքականութեան համար։

„Անգլօ-ֆրանսիական համաձայնութիւնը, բայի նրանից, որ խաղաղ լուծում կըտայ այլեւայլ խնդիրների, որոնք կարող էին ընդհարում առաջացնել երկու ազգերի մէջ, — ունի աւելի բարձր նշանակութիւն...

„Արեւելքում, Ֆրանսիան եւ Անգլիան, ունենալով Իտալիայի աջակցութիւնը, կարող են ծանրանալ օսմանեան կառավարութեան վրայ՝ ստանալու համար, վերջապէս, գործադրութիւնը երկար ժամանակից իվեր Մակեդօնիայի ու Հայաստանի համար խոստացւած ռէֆօրմների։

„Հեռաւոր Արեւելքում Ֆրանսիայի եւ Անգլիայի մերձեցումը — մէկը Ռուսաստանի, միւսը Եապօնիայի դաշնակից — պիտի նպատակ ունենայ ամենից առաջ սահմանափակել պատերազմի թատրը..։ Բայց այդ մերձեցումը մի աւելի բարձր նպատակ եւս պիտի ունենայ. նա պիտի պատրաստէ խաղաղութիւնը։ Պատերազմը հսկայ ցամաքային պետութեան եւ հեռաւոր կղզու թագաւորութեան միջեւ, այն պատերազմներից է, որոնք սպառնում են շարունակւել երկար ամիսներ, առանց որ մէկը պատերազմող կողմերից կարողանայ հասցնել իր հակառակորդին անզօրութեան...

„Մեր պարտականութիւնն է այսօր՝ հետեւել Կորէյի եւ Մանջուրիայի անցքերին, որպէս զի Անգլիայի համաձայնութեամբ օգտւենք վայրկեանից եւ երկու պետութիւնների կողմից խաղաղութեան առաջարկներ անենք կռւողներին։

„.. Որքան էլ, շատ տեսակէտներով, տարբեր լինեն երկու կռւող պետութիւնները, նրանք երկուսն էլ դրեթէ հաւասար շահ ունեն՝ ըստ կարելւոյն շուտ դադարեցնելու այս ծանր պատերազմը։ Որովհետեւ թէ մէկին եւ թէ միւսին՝ այդ վերջինը սպառնում է առաջացնել ներսում հակահարւածներ, որոնց մասին նրանք պէտք է մտածեն, եթէ կոյր չեն։ Դա ստոյգ է մանաւանդ Ռուսաստանի վերաբերմամբ...

„Ինչ որ էլ լինի ծայրագոյն արեւելքի ներկայ պատերազմի հետեւանքը, հնարաւոր է, որ նա եւս — Ղրիմի պատերազմի նման — անդրադառնայ Նեվայի ու Մօսկւայի ափերում, ինչպէս նաեւ չինական ծովերի եզերքին։ Եւ եթէ — ինչպէս յոյս են տածում շատ այնքա՜ն հպատակները — եթէ նա, պիտի բաց անէ ռէֆօրմների դարագլուխը, ապա աւելի լաւ է Ռուսաստանի եւ ընդարձակ կայսրութեան բոլոր ժողովուրդների համար՝ որ խաղաղութեան վերահաստատումը չափազանց երկար չյետաձգէ նրանց յոյսերի իրականացումը եւ որ ներքին բարենորոգման ու խաղաղացման գործը, անկախ ւած այնքա՜ն անհամբերութեամբ Ֆինլանդիայի ծոցից մինչեւ Արարատի ստորոտները՝ չկաշկանդւի եւ չկնճռոտւի պատերազմի առաջացրած բեռի ծանրութեամբ“.

***

Ուրախութեամբ տպագրում ենք Ամերիկայից ստացւած հետևեալ տողերը։

“Յեղափոխական գիտակցութեան տարածումը, որ վերջին տարիներս այնքան զօրեղ թափ մը առած էր Միացեալ Նահանգներուն մէջ — դաշնակցական կօմիտէներու կազմակերպութեամբ և անոնց տենդային ու արդիւնաւոր գործունէութեամբը — նոր փուլի մը մէջ կը մտնէ այս անգամ՝ շնորհիւ իգական սեռի գործակցութեան։ Կ'արժէ արձանագրել հոս դաշնակցական տիկիններու նորակազմ կօմիտէները, որոնք իրարու յաջորդեցին Ուէսթ Փուլմընէն մինչև Նիւ-Եօրք, Ֆիլատէլֆիա ու Ուօթըրթաուն և որոնց կը պատրաստուին հետևելու — ինչպէս կ'իմանանք — ուրիշ քաղաքներու հայուհիներ ևս“։

Շնորհաւորելով մեր ամերիկահայ քոյրերի այս զարթումը, ցանկանում ենք, որ նրանց ոգևորութիւնը յարատև կերպարանք առնէ՝ ոչ միայն վառ պահելու, այլև արգասաւորելու համար Հայրենիքի և հայ շարժման սէրը ամերիկաբնակ մեր հայրենակիցների մէջ։

***

Մենք ստացանք Կովկասից՝ „Հայկական Ինքնապաշտպանութեան Կենտրօնական Կօմիտէի“ հրատարակած հետևեալ ազդը.

„Մի քանի անձնաւորութիւններ, իրենց ստորաքարշ հպատակութեան զգացմունքները արտայայտելու համար, իրենց թոյլ են տւել օգնութիւն հասցնել մեր ոխերիմ թըշնամուն՝ ռուս կառավարութեանը։

„Այժմ, երբ այդ բռնակալ կառավարութիւնը իր սուր ու կոպիտ ոյժի միջոցով կտրեց գանձարանները, նոր կողոպտեց մեր եկեղեցին, այժմ, երբ դեռ թարմ են ազգութեան պաշտպան մարտիրոսների արեան հետքերը, դեռ գտնւում են այն տեսակ ստրկահոգի հայեր, որոնք ոտնակոխ անելով մեր ազգային պատիւն ու ժողովրդի շահերը, աշխատում են զօրացնել մեզ ճնշող այդ բիրտ ոյժը։ Սրանով ապացուցւում է, որ կազմակերպութիւնը որոշել է վերջ տալ այդ զազրելի արարքներին եւ ազգադաւ երեւոյթին, ուստի նախազգուշացնում է, որ այսուհետեւ նա դիմելու է ամենախիստ միջոցների“։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մեր խմբագրութիւնը ստացաւ Թաւրիզի վրայով հետևեալ հեռագիրը, մարտի 30-ից.

„Բասենի գաւառի Համիդիէ զօրագնդերը կազմ ու պատրաստ ճանապարհւեցին դէպի Մուշի դաշտը“ [1]։

***

Եւրոպական թերթերին հեռագրում են Կ. Պօլսից, որ պատրիարք Օրմանեանի միջամտութեամբ՝ ազատ արձակւեցին Մուշի եպիսկոպոսը և մի քանի նշանաւոր հայեր, որոնք բանտարկւած էին՝ հայերի դրութեան մասին Օրմանեանին իբր-սուտ հեռագիր զարնելու պատճառով։

1) Այդ հեռագրի պատճէնները հրատարակւեցին անմիջապէս „Ֆրանկ. Ցայտունգ“-ի „Օրօր“-ի եւ „Պըտիտ Ռեպիւբլիկ“-ի մէջ։

* * *

Անգլիական դեսպանատունը իր ձեռքն առաւ Վարդգէսի պաշտպանութիւնը և աշխատում է Երզնկում՝ նրան ազատ արձակելու համար, բայց Թիւրքաց իշխանութիւնները առաջ են բերում Վարդգէսի յանցաւորութիւնը՝ իբրև յեղափոխական առաջնորդի: Ցամենայն դէպս, Մեծ-Բրիտանիայի դեսպանատանը որոշած են յետ չնահանջել և հիմք կայ կարծելու, որ պիտի կարողանան գէթ խնայել տալ Վարդգէսի կեանքը:

* * *

Վիեննայի Freie Presse-ին հեռագրում են նոյն տեղից.

„Դրութիւնը Սասունի մէջ մնում է անփոփոխ: Հայ ապստամբապետ Անդրանիկը հրաժարւում է բանակցել՝ անձնատուր լինելու և իր խմբերը ցրւելու մասին: Սպասում են Մուշի եպիսկոպոսի միջնորդութեանը: Այդ դրութիւնը գրգռում է դիւանագիտական շրջանների ուշադրութիւնը, որոնք աւանդականօրէն հետաքրքրւում են հայկական գործերով: Անգլիայի կողմից արւած են Բ. Դրան հարկաւոր յորդորներ: Նոյնը կը հետևի Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից: Բ. Դուռը հաւատացնում է, որ զինւորական և քաղաքացիական իշխանութիւններին խստիւ հրահանգւած է՝ առ այժմ ոչինչ չձեռնարկել Անդրանիկի դէմ և արգելք լինել քրդերի յարձակումներին ու հարստահարութիւններին“:

* * *

Վերջին պահուն հեռագրում են Correspondenz Bureau-ին.

„Բիթլիզի վալիի տւած տեղեկութիւնների համաձայն՝ ապստամբապետ Անդրանիկը հրդեհել է Գենճ սանջակի երեք փոքրիկ քրդական գիւղեր, որոնց բնակիչները հրաժարւել էին միանալ նրան: Բացի այդ, խմբերից մէկը յարձակւել է Բիթլիզից հինգ մղոն հեռաւորութեան վրայ գտնւող մի գիւղի վրայ և սպանել է երեսուն մահմեդական:

„Թիւրքահայոց պատրիարք Օրմանեան հրահանգ ստացաւ Եըլդըզից՝ կրկին անգամ Մուշի եպիսկոպոսի միջոցով հրաւիրել Անդրանիկին՝ դադարեցնել իր չարագործութիւնները“:

## ՏԷՌՈՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մարտի 16-ին երեք տէռօրիստներ գնդակահար արին Շիրակի Փարագետ գիւղի բնակիչ և յայտնի լրտես Կիրակոս Պետրոսեանին: (Տես „Դրօշակ“, 1903 Թ. № 7): Տէռօրիստները ազատ են:

Գրեթէ միաժամանակ զարնւած է Էջմիածնի գաւառապետ Շմերլինգ. գնդակներից մէկը ծակել է նրա կուրծքը և ծանր վէրք բացել: Այդ երկրորդ սպանութեան փորձն է Շմերլինգի դէմ: Երիտասարդ Աբրահամեան կալանաւորւած է:

## ԱԶԴ

Ցաճկահայերի օգտին կազմակերպւած հարիւր հազար ռուբլիանոց վիճակախաղի տոմսակները լոյս ընծայւելուց անմիջապէս յետոյ՝ հայ ժողովրդի գլխին ծանրացաւ եկեղեցական ու վանական կալւածների գրաւման հարցը և բոլոր մտքերն անխտիր այդ խոշոր հարցով միայն զբաղւեցին: Այդպիսի նոր ու ծանր պայմանների տակ կանգ առաւ տոմսակների տարածումը, որի շնորհիւ „Դաշնակցութեան“ Բագւի Կենտր. Կօմիտէն ստիպւած է վիճակախաղը, փոխանակ ներկայ տարւայ յունւարին կայացնելու, յետաձգել մինչև առաջիկայ ապրիլի սկիզբը, նախապէս ներողութիւն խնդրելով տոմսակներ սպասող հասարակութիւնից:

Օգուտ քաղելով առիթից, կօմիտէն խնդրում է բոլոր այն անձնաւորութիւններին, որոնց մօտ կան տոմսակներ, շտապել այդ ժամանակամիջոցում հասցնել, ուր հարկն է, իրենց հաշիւներն ու անվաճառ մնացած տոմսակները:

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ԲԱԳՒԻ Կ. ԿՕՄԻՏԷ

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ** ստացած է՝

Ոսկանապատի ԴՐԱՄ կօմիտէից 10,000 ֆրանք:

Մ.- ք-ից 550 ֆր.:

Հաբէշստանի Ադիս Աբաբա ք-ից պ. Բաղդ. 60 ֆր.: Նոյն տեղից՝ հայ ընթ. վարչ-ից 15 ֆրանք: Ադէն ք-ից պ. Այնաչ. 24 ֆրանք.:

Բերլինից Մ. Կար. 45 ֆր.:

Դարմշտատի ուսանողներից 60 մարկ՝ „ի նպաստ երկրի կռւողների“:

Իտալիայի Նապօլ ք-ից Կայծակ 10 ֆր.:

Ցիւրիխից՝ Ժահր 10 ֆրանք:

Ժընէվից՝ Նշան 5 ֆրանք:

Ընդհանուր գումար 10,719 ֆր., 60 մարկ:

ՎՐԻՊԱԿ. — № 2-ում Արեւմտեան Բիւրօյի նւիրատւութեան ցանկում տպւած է՝ Գահիրէի կօմիտէից Ոսկանապատի կ. կ.-ի վիճակահան. 16 տոմսերի գին՝ 214 ֆր., պէտք է լինի՝ Աղէքսանդրիայի կ. կ.-ի եւայլն:

**ԲԱԼԿԱՆԵԱՆ** Կեդր. Կօմիտէն՝

Քօնստանցայից.—

Ղեւոնդեան խմբ. 121 ֆրանք, Սերոբ խմբ. 112, Զօրս Գանձ խմբ. 99. 50, Կարմիր-խաչ խմբ. 85, Պաշի-պօզուք խմբ. 69, Ալուարդ խմբ. 72, Ժաղիկ խմբ. 55, Տ. Թ. 50, Գ. Գույումճ. 20, Առիւծ 20, Տ. Լ. 20, Հ. Աղպ. 20, բարեկենդանի առթիւ մասնաւոր հանգամանկութենէ մը գոյացած 86. 50, Կիւլէմէր, Կտ. Օ. Խռ., Թօմիդ, Ց. Գ., Ց. Թ., Ց. Ց. Խոհարար 5-ական, Մ. Ս. Ք. 16, Աւետիս 15, Ց. Կ. 12, Միհ. Գ. 10, Ս. Օ. Խռ. 8, Թորոս Օ. 8, Մօլտավան 2 ֆր.: Գումար 931 ֆրանք:

Տօպրիչից.—

Սարգիս Ցակոբեան 50 սանտիմ, Միքայէլ Քէօմիւրճեան 1. 50 ֆրանք, Ոմն, Տրդատ Եաղուպեան, Գրիգոր Արսլանճեան, Մինաս Գ. Պաիքեան, Ցակոբ Պ. Աբիշեան, Պաղտասար Լալէեան 2-ական, Ալիքսան Թիւստէմեան, Միսաք Թորոսեան, Սարգիս Պետրոսեան 1-ական. Աբրահամ Խաչատուրեան 2. 50, Համբարձում Մամիկոնեան 2, Մհ. Խաչիկ մհ. Գեւորգեան 2, Մհ. Ցարութիւն եւ ընկ. 5, Ցովհաննէս Սարգիսեան 1. 50, Ցակոբ Ապաճեան 2. 50, Բարսեղ ոմն 1, Ցարութիւն Ցովհաննէսեան 1. 50, Ոմն 1, Առաքել Մուրատեան 2. 50, Նիշան Կիւլհանճեան 1, Ոմն 2, Ցարութիւն Կարապետեան 1, Մկրտիչ Բամուկճեան 1, Զինավարժ 1. 50, Աւետիս Մկրտիչեան 1, Ցարութիւն Մարտիրոսեան 2, Նասիպ Ցակոբեան 1, Սարգիս Մարտիրոսեան 2, Նասիպ Ցակոբեան 2, Ցարութիւն Մ. Կարապետեան 1, Մհ. Կարապետ մհ. Սարգիսեան 2, Աւետիս Գրիգորեան 1, Կարապետ Ց. Բէնպէճեան 1, Ալիքսան Օհանէսեան, Ժերուն Գրիգորեան, Մկրտիչ Պուրկազեան, Թադւոս Խաչատուրեան, Բարսեղ ոմն, Սահակ Լօքմաճեան 50-ական սանտ., Ճանիկ Անդրանիկեան 40 սանտիմ: Գումար 61 ֆր. 40 սանտիմ:

Պուքրէշից.—

Զատիկ 10 ֆրանք, Սրապ 5, Պօզեան 5, Արիս, Շաքարճեան, Խաչեան, Ա. Օն. 3-ական, Աղամ, Ժիրայր, Զէրքէզ, Ցակոբ Աճիմեան, Ա. Օն., Զ. Աստղիկ 2-ական, Թաթէոս-խաչիկ, Արապածիարշակ, Մարգար Սուքիասեան, Վարդերես Պարտիզպանեան, Թորոս Պօզեան, Սարգիս Գրիգորեան, Արշակ, Գայլ, Բոխողարէն 1-ական, Աբգար 5, Պ. Ս. Խռ. 5, Նշան 50 սանտիմ:

